

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ----- 2023թ.

N --- -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՆՆԱ ՏԵՐ-ԱՎԵՏԻՔՅԱՆԻ
ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Արաբկիրի 38 փողոցն անվանակոչել ճարտարապետ Աննա Տեր-Ավետիքյանի անվամբ՝ «Աննա Տեր-Ավետիքյան փողոց»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ

ԻԶԱԲԵԼԼԱ ԱԲԳԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ

ՔՐԻՍՏԻՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՆՆԱ ՏԵՐ-ԱՎԵՏԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի առաջին կին ճարտարապետը համարվող Աննա Տեր-Ավետիքյանը ծնվել է 1908 թ.-ի ապրիլի 23-ին Երևանում, որտեղ և մահացել է 2013 թ.-ի հունվարի 16-ին:

Կենսագրություն

1915-1924 թվականներին սովորել է Հռիփսիմյան իգական գիմնազիայում:

1924 թվականին ավարտել է դպրոցն ու ընդունվել Երևանի պետական համալսարանի տեխնիկական ֆակուլտետի ճարտարապետության բաժինը, որի հիման վրա հետագայում ստեղծվել է Պոլիտեխնիկական ինստիտուտը: Բուհն ավարտել է 1929 թվականին:

1926 թվականից աշխատել է Երևանի քաղխորհրդի գործկոմի ճարտարապետական բաժնում, որը ղեկավարում էր Նիկողայոս Բունիաթյանը: Աշխատել է նաև Ալեքսանդր Թամանյանի արվեստանոցներում:

1935-1951 թվականներին աշխատել է Երևանի քաղխորհրդի (1942 թվականից՝ Գլխավոր ճարտարապետանախագծային վարչություն) ճարտարապետական արհեստանոցում որպես ճարտարապետ-նախագծող:

1941-1943 թվականներին ղեկավարել է ՀԽՍՀ Ճարտարապետական ֆոնդը:

1951 թվականի մայիսի 1-ից մինչև 1951 թվականի հուլիսի 16-ն աշխատել է «Երքաղնախագիծ» նախագծային ընկերությունում որպես ավագ ճարտարապետ:

1963-1966 թվականներին աշխատել է «Գիպրոտորգ» ինստիտուտի հայկական մասնաճյուղում որպես գլխավոր մասնագետ:

Պարգևներ, Մեդալներ

- 1938, 1956 թվականներին՝ կին ճարտարապետների ստեղծագործության համամիութենական ստուգատեսների դափնեկիր
- 1945 թվականին՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգիր

- 1948 թվականին կին-ճարտարապետների համամիութենական մրցույթին արժանացել է առաջին մրցանակի՝ Երևանում գտնվող կինեմատոգրաֆիստների բնակելի շենքի նախագծի համար: Նույն թվականին արժանացել է «Կինն արվեստի և ժողովրդական ստեղծագործության ասպարեզներում» Փարիզի միջազգային ցուցահանդեսի դիպլոմին դպրոցի նախագծման համար (հետագայում՝ ՀԽՍՀ ԳԱԱ Լեզվի ինստիտուտ):
- 1956 թվականին՝ Կին-ճարտարապետների աշխատանքների համամիութենական ստուգատեսի դափնեկիր
- 1967 թվականին՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգիր
- 1968 թվականին արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր ճարտարապետի կոչմանը:
- 2002 թվականին՝ Ալեքսանդր Թամանյանի անվան ոսկե մեդալ
- 2008 թվականին՝ Երևանի քաղաքապետարանի «Երևան» ոսկե մեդալ

Աննա Տեր-Ավետիքյանի նախագծերով Երևանում կառուցվել է շուրջ 40 շենք՝ բնակելի տներ, դպրոցներ /Մայակովսկու, Նալբանդյանի անվան Երևանում/: Դպրոցների շենքեր են նախագծվել նաև Հայաստանի այլ քաղաքներում:

Նրա նախագծած կառույցներից երկուսը, ցավոք, ապամոնտաժվել են՝ Սասունից Դավիթ կինոթատրոնի և ԳԱԱ Լեզվի ինստիտուտի շենքերը :

Աննա Տեր-Ավետիքյանի՝ Երևանին նվիրած շենքերից են.

- ✓ Բնակելի շենք Աբովյան փողոցում (1931 թվական)
- ✓ Կորյունի փողոցի և Մաշտոցի պողոտայի անկյունում գտնվող կինեմատոգրաֆիստների բնակելի տունը՝ նշանավոր «Պոնչիկանոցը»
- ✓ Աբովյան-Կորյուն փողոցների խաչմերուկում գտնվող բնակելի շենքը
- ✓ Բնակելի շենք Մոսկովյան և Բաղրամյան պողոտայի անկյունում, 1945 թվական
- ✓ Բնակելի շենք Օրջոնիկիձե փողոցում (ներկայումս՝ Արշակունյաց պողոտա)
- ✓ Բնակելի շենք Ղուկասյան փողոցում (ներկայումս՝ Ղազար Փարպեցու)

Նշենք նաև, որ Աննա Տեր-Ավետիքյանն ամուսնու՝ Կոստանդին Հովհաննիսյանի հետ նախագծել են ՀՀ Ներքին գործերի նախարարության (ներկայումս՝ ՀՀ Ոստիկանության) շենքը՝ Նալբանդյան և Չարենցի փողոցների անկյունում:

Աննա Տեր-Ավետիքյանը հին երևանցիների հայտնի տոհմից է, որի շնորհիվ ստեղծվել են պատմամշակութային արժեք ունեցող շենքերից շատերը՝ Ֆիլիարմոնիայի փոքր դահլիճը, ԵՊՀ հին շենքը, Աբովյան փողոցում գտնվող առաջին հիվանդանոցը:

Տեր-Ավետիքյանների ջանքերով իրականացվել է նաև Կրթուլաղի աղբյուրներից եկող ջրամատակարարման առաջին ցանցը Երևանում, ինչը երևանցիներին մաքուր խմելու ջուր ունենալու հնարավորություն տվեց:

Կարևորելով Աննա Տեր-Ավետիքյանի ունեցած մեծ ներդրումը Երևանի ճարտարապետության ոլորտում՝ անհրաժեշտ ենք համարում նրա անվան անմահացումը՝ «Աննա Տեր-Ավետիքյան» փողոց ունենալով մեր քաղաքում:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ

ԻԶԱԲԵԼԼԱ ԱԲԳԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ

ՔՐԻՍՏԻՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՆՆԱ ՏԵՐ-ԱՎԵՏԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Աննա Տեր-Ավետիքյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՆՆԱ ՏԵՐ-ԱՎԵՏԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Աննա Տեր-Ավետիքյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ

ԻԶԱԲԵԼԼԱ ԱԲԳԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ

ՔՐԻՍՏԻՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ